



ՀԵՅ – Փոխարկելի արժույթով միջնահարկ հիբրիդային ֆինանսավորում (*Mezzanine* վարկ)

Երկիր՝	Հայաստան
Ծրագրի համարը՝	50528
Բիզնես ոլորտ.	Էներգետիկա
Հատվածը՝	մասնավոր
Բնապահպանական դաս՝	Բ
Խորհրդի նիստի ակնկալվող ամսաթիվը՝	2018թ. նոյեմբերի 28-ը
Կարգավիճակը՝	Անցել է հայեցակարգի ուսումնասիրության փուլը
Ծրագրի ամփոփ նկարագրության (ՄԱՆ)	
հրապարակման ամսաթիվը՝	2018թ. հոկտեմբերի 25-ը

### Ծրագրի նկարագրությունը

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությանը («ՀԵՅ» կամ «Վարկառու» կամ «Ընկերություն») տրամադրվող՝ մինչև 10 մլն ԱՄՆ դոլար փոխարկման տարբերակով սուբորդինացված վարկ՝ ֆինանսավորելու ՀԵՅ-ի ներդրումային ծրագրի (2019-27) 2-րդ փուլի մի մասը՝ բաշխիչ ցանցի արդիականացման, այդ թվում Հայաստանում սմարթ հաշվիչների ներդրման, ինչպես նաև կորպորատիվ կառավարման բարելավման գործում ընկերությանն աջակցելու նպատակով:

### Ծրագրի նպատակները

Վարկի միջոցները կօժանդակեն Վարկառուին (i) ՀԵՅ-ի թափանցիկության և կորպորատիվ կառավարման գործելակերպի բարելավման և (ii) Հայաստանի հնացած էներգետիկ ենթակառուցվածքի արդիականացման գործում:

### Անցումային շրջանի վրա ազդեցությունը

Նախատեսվում է, որ Ծրագիրը կնպաստի (i) որակի բարձրացմանը՝ ՀԵՅ-ում կորպորատիվ կառավարման չափանիշների բարելավման միջոցով, ի ցույց դնելով այս օրինակը Հայաստանում գործող այլ ընկերությունների համար և (ii) Կանաչ քաղաքի գաղափարին՝ էներգաարդյունավետության բարելավման միջոցով՝ նվազեցնելով տեխնիկական և առևտրային կորուստները և, համապատասխանաբար, նաև ածխաթթու

գազի ուղղակի արտանետումները, համաձայն ՎՋԵԲ-ի՝ Անցում դեպի կանաչ տնտեսություն մանդատի:

### **Հաճախորդի մասին**

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

ՀԷՑ-ը փակ բաժնետիրական ընկերություն է, որը հիմնադրվել է ՀՀ օրենքներին համաձայն և զբաղվում է Հայաստանում էլեկտրաէներգիայի փոխանցմամբ և բաշխմամբ: ՀԷՑ-ի 100%-ը պատկանում է *Տաշիր Գրուլի*-ին, որը ավելի քան 200 արդյունաբերական և շինարարական ընկերություններից բաղկացած խոշոր դիվերսիֆիկացված խումբ է և վերահսկվում է հայազգի գործարար Սամվել Կարապետյանի և նրա ընտանիքի անդամների կողմից:

### **ՎՋԵԲ-ի կողմից ֆինանսավորումը՝**

10,000,000.00 ԱՄՆ դոլար

### **Ծրագրի ընդհանուր գումարը**

40,000,000.00 ԱՄՆ դոլար

### **Բնապահպանական և սոցիալական խնդիրների ամփոփ նկարագրություն**

Ներկայիս բաշխիչ ցանցերի արդիականացման հետ կապված բնապահպանական և սոցիալական խնդիրները, որոնք սահմանափակվում են ցածր լարման գծերի խնդիրներով, տեղամասային են և կարող են հեշտությամբ հայտնաբերվել և գնահատվել որպես Բնապահպանական և սոցիալական ասպեկտների ուսումնասիրության մի մաս, ընդ որում այդ խնդիրները կարելի է լուծել մեղմացման միջոցառումների օգնությամբ:

Նախատեսվում է, որ ներդրումային ծրագիրը, որի նպատակն է էներգախնայողության միջոցառումների բարձր մակարդակը, նշանակալի բնապահպանական օգուտների կհանգեցնի: Բանկի կողմից ֆինանսավորվող նախորդ ծրագրի օգնությամբ ընկերությունն ամրապնդեց իր բնապահպանական և սոցիալական կառավարման կառուցվածքը, ներկայումս լուծում է ռիսկերի հետ կապված խնդիրները և բարելավել է իր ԲՄ կառավարման և համայնքի ներգրավման գործելակերպը: Ընթացիկ նախագծի համաձայն, ուսումնասիրությունը կենտրոնացած էր ներդրումային ծրագրի վրա, որն ուղղված էր ցածր լարման առկա գծերի և ենթակայաններ արդիականացմանը: Ուսումնասիրության արդյունքում չեն հայտնաբերվել բնապահպանական կամ սոցիալական որևէ զգալի խնդիրներ: Ոչ այդքան նշանակալի հարցերի շուրջ առաջարկություններ են արվել, որոնք ներառվել են Բնապահպանական և սոցիալական գործողությունների առկա ծրագրում (ԲՄԳԾ): Բանկը կշարունակի մշտադիտարկել ՀԷՑ-ի կատարողականը՝ տարեկան զեկույցներն ուսումնասիրելով և մոնիտորինգի այցեր կատարելով, ըստ անհրաժեշտության:

## **Տեխնիկական աջակցություն**

Ծրագիրը կօգտագործի ՎՋԵԲ-ի բաժնետերերի հատուկ հիմնադրամի միջոցները (մինչև 200. 000 եվրո)՝ ներգրավելու խորհրդատուների թիմ, որը կօժանդակի Բանկին՝ կորպորատիվ կառավարման գործողությունների պլանի իրականացման ժամանակ ՀԵՑ-ին սատարելու գործում:

Ընկերության ներկայացուցչի կոնտակտային տվյալներ՝

Արմեն Արշակյան

arshakyan\_AS@ena.am

+37477774000

www.ena.am

ՀՀ, Երևան 0047, Արմենակյան փողոց 127

## **Բիզնես հնարավորություններ**

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմեք պատվիրատու ընկերությանը:

Պետական ոլորտներում իրականացվող ծրագրերի համար այցելեք [ՎՋԵԲ գնումների բաժին](#), հեռ.: +44 20 7338 6794

Էլ. հասցե. [procurement@ebrd.com](mailto:procurement@ebrd.com)

## **Ընդհանուր հարցումներ**

ՎՋԵԲ ծրագրի վերաբերյալ հարցումներ, որոնք կապված չեն գնումների հետ  
Հեռ. +44 20 7338 7168

Էլ. հասցե. [projectenquiries@ebrd.com](mailto:projectenquiries@ebrd.com)

## **Հանրային տեղեկատվական քաղաքականություն (ՀՏՔ-PIP)**

ՀՏՔ-ն սահմանում է ՎՋԵԲ-ի կողմից տեղեկատվության տարածման և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելու կարգը, որպեսզի խթանի իր ռազմավարության, քաղաքականության և գործառնությունների վերաբերյալ արդյունավետ իրազեկումը և ըմբռնումը: Խնդրում ենք այցելել ստորև տեղակայված Հանրային տեղեկատվության քաղաքականության էջ՝ պարզելու, թե ինչպես կարող եք ստանալ Հանրային ոլորտի խորհրդի զեկույց:

[ՀՏՔ-ի տեքստը](#)

## **Ծրագրի բողոքարկման մեխանիզմ (ՕԲՄ-PCM)**

Ծրագրի բողոքարկման մեխանիզմը (ՕԲՄ-PCM) ՎՋԵԲ-ի հաշվետվողականության մեխանիզմն է: Այն հնարավորություն է ընձեռում ՎՋԵԲ-ի կողմից ֆինանսավորված

ծրագրերի վերաբերյալ անհատների կամ կազմակերպությունների կողմից ստացված բողոքների անկախ վերանայման համար, որոնք ենթադրաբար առաջացրել են կամ հավանական է, որ կպատճառեն բնապահպանական և/կամ սոցիալական վնաս:

Խնդրում ենք այցելել [Ծրագրի բողոքարկման մեխանիզմ](#) էջը՝ պարզելու, թե ինչպես ներկայացնել գանգատ: ԾԲՄ աշխատակիցը ([pcm@ebrd.com](mailto:pcm@ebrd.com)) պատրաստ է պատասխանելու ցանկացած հարցի, որ կարող էք ունենալ գանգատի ներկայացման, ինչպես նաև գրանցման ու իրավասության չափանիշների վերաբերյալ՝ [ԾԲՄ կանոնների](#) ու [ընթացակարգին համապատասխան](#):